ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻՆ

Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետի դեկան տիար Ռուբեն Միրզախանյանի պարգեւաբաշխության արարողությունը: Հայրենիքին, ժողովրդին եւ Հայ Առաքելական Եկեղեցուն բերած ծառայությունների համար Հայրապետական Կոնդակով Ռուբեն Միրզախանյանն արժանացավ Հայոց Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» պատվո բարձր շքանշանին:

Մեծարյալի կյանքին ու գործունեությանն անդրադարձավ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր տիար Հակոբ Ավետիքյանը: Նա ընդգծեց Ռ. Միրզախանյանի կարեւոր ներդրումը Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության ստեղծման, «Ազգ» օրաթերթի եւ «Թեքեյան» մշակութային կենտրոնի հիմնադրման գործում:

Այնուհետեւ «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո Վեհարանի հանդիսությունների սրահ բերվեց Հայրապետական Սրբապատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը:

«Անձնապես ճանաչում ենք Ձեզ եւ ծանոթ ենք Ձեր ազգասեր, հավատավոր ու եկեղեցասեր ոգուն եւ Լուսավորչապսակ Սուրբ Էջմիածնի հանդեպ Ձեր որդիական անկեղծ զգացումներին: Տիրոջ օրհնությամբ Ձեր կյանքի տարիները լի են ազգանվեր սպասավորության գովարժան արդյունքներով ու վաստակով:

Տասնամյակներ շարունակ Դուք մանկավարժական աստվածահաճո առաքելություն եք իրականացնում Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում՝ Ձեր կարողությունները ի սպաս դնելով կրթօջախի երախտարժան գործունեությանը: Իբրեւ դասախոս եւ դեկան բուհի մշակույթի ֆակուլտետի՝ Դուք հոգածու նվիրումով շնորհաշատ հայորդիների հոգիներում խնամում եւ առավել զորացնում եք սերը հանդեպ հայ եւ համաշխարհային մշակույթը, հոգեւոր ու ազգային մեր արժեքները»,- ասվում է Հայրապետական Կոնդակում:

Պարգեւաբաշխումից հետո իր սրտի խոսքն ասաց տիար Ռուբեն Միրզախանյանը: Շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին մեծ պատվի արժանացնելու համար՝ նա անդրադարձավ Գարեգին Բ Վեհափառի 10-ամյա գահակալության շրջանում Հայ Եկեղեցու վերազարթոնքին:

«Մի քանի ամիսներ անց ազգովին պիտի տոնախմբենք Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 10-ամյակը. տարիներ, որոնք շատ որոշակի իմաստավորում ունեն մեր ժողովրդի կյանքում, որոնք աննախադեպ են եկեղեցաշինության տեսանկյունից: Թույլ տվեք ասել, որ եկեղեցաշինություն ասելով՝ մենք չենք ենթադրում միայն նոր եկեղեցիների կառուցում, վեր հառնում թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում, այլ ենթադրում ենք եւ հպարտ ենք, որ այս տարիների ընթացքում նոր որակական աճ եւ բովանդակություն ունեցավ հոգեւոր դասի նախապատրաստումը, նոր կրթօջախների ստեղծումը, որ մենք միանգամայն նոր

պարկեր ունենք երիտասարդ սերնդի գեղագիտական դաստիարակության ասպարեզում: Եկեղեցաշինություն ասելով՝ մենք ենթադրում ենք այն ազգանվեր, ամենօրյա ազգօգուտ գործունեությունը, որը ծավալում է Հայ Առաքելական Եկեղեցին Հայրենիքում եւ Սփյուռքում գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նրա անմիջական ղեկավարությամբ, ամենօրյա լուրջ եւ հետեւողական գործունեությամբ»,- նշեց փիար Միրզախանյանն իր խոսքում:

Վերջում ներկաներին իր հայրական օրհնությունը բաշխեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Պարգեւաբաշխության ընթացքում ելույթ ունեցավ «Վերածնունդ» կամերային նվագախումբը՝ ղեկավարությամբ նվագախմբի գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր Ռուբեն Ասատրյանի: Իրենց անզուգական կատարումներով հանդես եկան նաեւ ՀՀ վաստակավոր արտիստուհի Անահիտ Մխիթարյանը եւ ՀՀ ժողովրդական արտիստ, դուդուկահար Ջիվան Գասպարյանը:

Հանդիսությանը ներկա էին ՀՀ վարչապետ փիար Տիգրան Սարգսյանը, ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ԱԺ պատգամավորներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, գիտության, մշակույթի եւ արվեստի մշակներ: